Հանրային հանդիպում առաջարկվող վաճառքի վերաբերյալ
Windsor

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ WINDSOR-Ի ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գլխավոր դատախազն ուսումնասիրում է Կալիֆորնիայի շահույթ չհետապնդող հասարակական HumanGood SoCal կորպորացիայի կողմից «Windsor» անվամբ հայտնի շարունակական խնամքի թոշակառուների համայնքի առաջարկվող վաճառքը Կալիֆորնիայի շահույթ չհետապնդող հասարակական կորպորացիային՝ Ararat Home of Los Angeles, Inc.-ին: Windsor-ը տեղակայված է 1230 E. Windsor Road in Glendale, California հասցեում: Windsor-ը բաղկացած է 141 բնակարաններից՝ ներառյալ 74 բնակելի բնակարաններից, 39 օժանդակությամբ բնակվելու բնակարաններից և 28 մահճակալ ունեցող առողջության կենտրոնից: Գործարքն ուսումնասիրվում է՝ համաձայն Կալիֆորնիայի Կորպորացիաների մասին օրենսգրքի Բաժին 5914 *և այլն*:

Գլխավոր դատախազը հանրային հանդիպում կանցկացնի 2022թ. դեկտեմբերի 28-ին, ժամը 11:00 AM-ից սկսած, 1230 E. Windsor Road, Glendale, California 91205 հասցեով: Հանրային հանդիպման նպատակը Windsor-ի վերահսկողության և կառավարման առաջարկվող փոփոխության վերաբերյալ մեկնաբանություններ ստանալն է:

Մարդիկ կարող են և խրախուսվում են ներկայացնել իրենց տեսակետներն առաջարկվող գործարքի վերաբերյալ հանրային հանդիպմանը կամ կապվելով Գլխավոր դատախազի տեղակալ Լիլի Ուիվերի (Lily Weaver) հետ հեռախոսով՝ 213-269-6174 հեռախոսահամարով, էլ. նամակով՝ Lily.Weaver@doj.ca.gov հասցեով կամ փոստով՝ 1300 I Street, Sacramento, California, 95814: Գրավոր մեկնաբանությունների ստացման վերջնաժամկետն է 2022թ. դեկտեմբերի 28-ը, ժամը 5:00 PM-ը՝ Խաղաղօվկիանոսյան ժամանակով: